

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

**«Մաքուր երկաթի գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերություն, Հայաստանի Հանրապետություն,
0053 ք.Երևան, Արցախի 75, հեռ. 474-131, 474-260**

Հաշվետվության համարն ու ամսաթիվը՝ թիվ 2, 14 ապրիլի 2009թ.

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ **սովորական անվանական բաժնետոմսեր**

արժեթղթերի քանակը՝ **69093**

արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ **10000 (ՀՀ դրամ)**

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը»:

ստորագրող անձինք՝

Գ. Կարապետյան

**խորհրդի նախագահ,
գլխավոր տնօրեն**

Ս. Խաչատրյան

**խորհրդի անդամ,
գլխավոր հաշվապահ**

Ստորագրությունները հավաստում են (ստորագրությունները հավաստվում են են տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի կամ նման իրավասություն ունեցող այլ անձի կողմից)՝

Գ. Կարապետյան

**խորհրդի նախագահ,
գլխավոր տնօրեն**

14.04. 2009թ.

Կ.Տ.

«Մաքուր Երկաթի գործարան» ԲԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) տնօրենների խորհուրդը իր 2009 թ. մարտի 10-ի նիստում որոշել է հրավիրել Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով:

Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը գումարվել է 2009 թ. ապրիլի 3-ին Ընկերության գտնվելու վայրում՝ ք. Երևան, Արցախի 75 հասցեով: Ի թիվս այլ հարցերի ժողովը ընդունել է նաև հետևյալ որոշումը (օրակարգի 5-րդ հարց).

1. Ուղղել Ընկերության 2008 թ. ֆինանսական տարվա արդյունքներով ստացված զուտ շահույթից 1,727,325,000 (մեկ միլիարդ յոթ հարյուր քսանյոթ միլիոն երեք հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ սովորական անվանական բաժնետոմսերի շահութաբաժինների վճարմանը: Յուրաքանչյուր մեկ սովորական անվանական բաժնետոմսի վճարել տարեկան շահութաբաժին 25,000 ՀՀ դրամ:
2. Շահութաբաժինների վճարումները սկսել 2009 թ. մայիսի 1-ից:
3. Շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթիվը սահմանել Ընկերության բաժնետերերի ցուցակը կազմելու օրը՝ 2009 թ. մարտի 13-ը:

Ժողովի որոշմամբ տնօրենների խորհրդի գործող կազմը վերընտրվել է:

Տնօրենների խորհուրդը իր 2009 թ. ապրիլի 8-ի նիստում որոշել է տնօրենների խորհրդի նախագահ և գլխավոր տնօրեն վերընտրել Գեորգի Կարապետյանին: